

ԳԼՈՒԽ Դ.

1 Յաղագս դարձեալ պատերազմին, որ եղել ի Բագաւան յաւանին Բագրաւանդ գաւառին ընդ Պապ թագաւորն Յայոց եւ ընդ զաւրսն Պարսից:

2 Ապա յետ այսորիկ թագաւորն Պարսիցն կրկնէր լինէր զաւրաժողով ամենայն ուժով եւ ամենայն զաւրութեամբն իւրով. խաղայր գնայր ամենայն զաւրաւքն իւրովք հասանէր յաշխարհն Ատրպայականի: 3 Եւ ինքն անդր դադարէր սակաւութեւ, եւ զամենայն զաւրացն զբազմութիւն առաքէր ի վերայ թագաւորին Պապայ ի պատերազմ: 4 Եւ եկեալ զաւրքն Պարսից՝ ասպատակ առնէին եւ ի միջնաշխարհն Յայոց. ապա եւ թագաւորն Յայոց Պապ զաւրաժողով առնել հրամայէր ի Բագաւանն: 5 Եւ զաւրքն Յունաց, որ էին յեռանդին ի Բախշանս¹, ի մի վայր ժողովեցան առ թագաւորն Պապ, եւ ածին փոս զբանական իւրեանց մաւտ ի լեառն ի Նպատ՝ մերձ ի գետն եւփրատ, եւ կազմեալ պատրաստեալ կային գործոյ ճակատուն:

6 Ապա զաւրավարն սպարապետն Յայոց Մուշեղ ժողովէր զամենայն զաւրսն Յայոց աւելի եւս քան զընտուն հազար, եւ կազմէին պատրաստութեամբ: 7 Իսկ իբրեւ զաւրահատոյցն առնէր Շապուհ Պարսից թագաւորն զզաւրս իւր ի վերայ աշխարհին Յայոց եւ ի վերայ զաւրացն Յունաց, Ուռնայր արքայ Աղուանից անդ էր առ թագաւորին Պարսից: 8 Ապա յառաջ կայր եւ ինկորէր պարգեւս Ուռնայր ի Շապուհոյ արքայէն Պարսից, եւ ասէր՝ թէ Կամ լիցի քեզ, արանց քաջ², զի եւ ինձ պարգեւ հրաման տացես, զի Յայոց գնդին Պապայ արքային ես ինձէն ելից իմով գնդովս նահատակ. զի Արեաց գնդին պատեհ է դիպան ելանել զաւրացն Յունաց, իսկ ես իմով գնդաւս Յայոց իշխանացն ելից: 9 Եւ Շապուհ թագաւորն հաճեցաւ, եւ շնորհ կալաւ եւ հրամայեաց: 10 Բայց Մերուժանայ Արծրունւոյ պատասխանի տուեալ Ուռնայրի, ասաց. Աստ արկեր զգագիւ գիրկս. բայց թէ ժողովել կարիցես, մեծ զարմանք իցես: 11 Եւ գաղտուկ խորհրդով զայս գուշակութիւն Մերուժանն ի ձեռն հրեշտակի առ Մուշեղ զաւրավարն Յայոց հասուցանէր՝ թէ գիտեա եւ պատրաստեաց, Մուշեղ. զի մեծաւ պարծանաւք պարգեւ ինկորեալ է զձեզ Ուռնայրի արքային Աղուանից. արդ գիտես զինչ գործիցես:

12 Բայց մինչ դեռ խաղացեալ³ զային զաւրքն Պարսից ի վերայ Յայոց, եւ Ուռնայր արքայ Աղուանից իւրով գնդաւն ընդ Նոսա, խաւսէր թագաւորն Աղուանից ընդ այնոսիկ՝ որ ընդ իւրն էին, ասէր. Յանձն լիցի ձեզ, յիշելով ի ժամանակի՝ իբրեւ ձերբակալ արասցուք զզաւրսն Յունաց, զբազումս ի Նոցա-

1 Յամենայն օրինակս՝ ի Ռաշշանն

2 Յամենայն օրինակս՝ արանց քաջաց

3 Յօր. խօսեցեալ